

ԳՐԱԴԻՍՈՒՄՈՒԹԻՒՆ.

ՄԱՍՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԳՈՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԳՐԱԲԱՐ, ԵՐԵՎԱՆ, 2014, 492 ԷԶ

Գուրգեն Խաչատրյանը հայրենի լեզվաբան է, ունի հայերենին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ, գրաբարից թարգմանություններ: Շուրջ երեսուն տարի գրաբար է դասավանդում Վանաձորի պետական համալսարանում, 1989 թ. հրապարակել է «Գրաբարի շարահյուսության ձեռնարկը», իսկ վերջերս՝ «Գրաբար» (Տեսական և գործնական պարապմունքների նյութեր) գիրքը:

Քաջարեղյակ լինելով եղած դասագրքերին, ձեռնարկներին և ուղեցույցներին, բնականաբար, նոր գիրք ներկայացնելիս հեղինակը մի կողմից պետք է օգտագործեր դրանցում շարադրված նյութերը, մյուս կողմից՝ ձգտեր նոր բան ասել կամ որոշ հասկացություններ, իրողություններ նորովի բնութագրել:

Նա հենց այդպես է վարվել. **գիրքը հագեցած է գրաբարի հնչյունական, բառաբերականական իրողությունների նորովի բնութագրումներով և «նորամուծություններով»:**

Գրքի բաժիններն են՝

Նչյունաբանություն և ուղղախոսություն.

Ձևաբանություն (թեքվող և չթեքվող խոսքի մասեր).

Շարահյուսություն (բառակապակցություն, նախադասություն).

Նոդեր.

Ընթերցարան:

Դրական և նորովի բնութագրումներ

ա. Ընդհանուր-պարզական հնչյունափոխության կանոնների իմացությամբ ապահովվում է գրաբարի լեզվական աղբյուրների մերօրյա ընթերցանությունը: Օրինակ՝ «...արամբն Ներսեհի Բաջերունոյ և այլ նախարարօքն» [արամբըն Ներսեհիվ Բաջերունվօ յէվ նախարարօքըն], «աուրս» [ավուրըս], «յիշելոյ» [իիշելօ], «բոյլ» [բույլ], «մեւս» [մյուս], «անուանդ» [անվանըդ]:

բ. Մանրամասն բնութագրվում է հոլովման համակարգը՝ նկատի ունենալով հոլովները, հոլովիչները, հոլովակերպները, հոլովման փեսակներն ու բնույթը՝ պարզ և խառն, արտաքին-վերջադրական-ձայնավորահանգ, ներքին-ներդրական-ձայնորդահանգ, անկանոն (զարպուղի), դերանունների համար՝ նաեւ պա-

կաս(ավոր) հոլովումներ, զուգաձեռություններ: Այլ գրքերում բացառություններ դիտված բառերն այսպեղ դասված են անկանոն հոլովման մեջ, եւ անկանոն համարված 10 բառի դիմաց տրված է անկանոն հոլովման 40 բառ: Կանոնավոր հոլովման վերաբերյալ տրվում են 7 կետով գիտելիք-բացատրություններ: Բոլոր թեմաների, ենթաթեմաների վերջում տրվում են առաջադրանքներ եւ անգիր սովորելու հանձնարարություններ: Հոլովման հարացույցները վերցված են վանդակներում, կան մեծ թվով ծանոթագրություններ:

Հոլովման համակարգում ներառված են գոյականների, ածականների, թվականների, դերանունների եւ դերբայների հոլովումները, նրանցում առկա անեզական եւ անհոգնական բառերը:

գ. Բայի կազմությունը, քերականական հատկանիշները, խոնարհման համակարգը բնութագրվում են մանրամասնությամբ. բայականության, հիմքականության, լծորդական, հարացուցային արժեքներն ու բաղադրիչները (արմար, բայածանց, հիմք, լծորդ, հիմքակազմիչ ձեռույթ, դիմաթվային վերջավորություն եւ այլն), անդեմ եւ եղանակային ձեւերը ցուցադրված են վանդակներում եւ բազմաթիվ գծապարկերներում՝ + եւ - նշմարումներով:

Բայի սեռը բնութագրվում է դերբայների եւ ներգործածելու ու կրավորածելու խոնարհումների համակարգերում՝ մեծ տեղ հատկացնելով կրկնասեռությանը:

Առանձնակի բնութագրումներ ունեն անկանոն, պակասավոր եւ միադիմի բայերը: Ըստ հեղինակի՝ գրաբարի անկանոն բայերի թիվը հասնում է շուրջ հարյուրի (էջ 283), եւ գրքում ըստ խոնարհումների տրված են ութսունը՝ Ե խոնարհում՝ 18, Ա՝ 32, Բ՝ 12, Ո՝ 18: Պակասավոր եւ միադիմի բայերը տարբերակներ են. **առաջին խմբում՝ արբի, բամ, տամ, գոգցես, գում, եկի, եղանիմ, եմ, երթամ, րմպեմ, իք, լինիմ, կալ(ն)ում, կայ, կերայ, չոգայ, պարտիմ, պիտի, ունիմ, ուտեմ**, եւ այլն, **երկրորդ խմբում՝ անձրեւե, լուսանայ, մարթի, պիտի (=կարելի լինի, հնարավոր լինի)** եւ այլն:

դ. Չթեքվող խոսքի մասեր են՝ **մակբայ** (տեղի, չափի, ժամանակի, ձեռի), **կապ** (1. **նախդիր** եզրաբառով հորջորջվող բառեր՝ **առ, գ, ընդ, ըստ, ի, ց**, 2. **նախադրություններ եւ ետադրություններ** եզրույթներով հայտնի բառեր), **վերաբերական, ձայնարկություն**, որոնց տրվում են համապատասխան բացատրություններ:

ե. Շարահյուսության բաժինն ընդգրկում է բառակապակցությունը՝ գոյականական, ածականական, բայական եւ մակբայական տեսակների բնութագրումներով: Այս սահմանվում է նախադասությունը՝ ստորոգման, եղանակավորվածության, քերականական ձեւավորման ու հնչերանգային ավարտվածության հատկանիշներով: Շավալուն ներկայացվում են բայական եւ անվանական միակազմ նախադասությունները, հակիրճ՝ երկկազմ եւ բառ-նախադասությունները: Բնութագրվում են ենթական, ստորոգյալը՝ իրենց տեսակներով, գոյական անդամի լրացումները՝ որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, բայական անդամի լրա-

ցումները՝ խնդիրները (սեռի՝ ուղիղ, ներգործման, բնության՝ հանգման, անջարման, միջոցի, վերաբերության) և պարագաները (տեղի, ժամանակի, պարճառի, ձևի, չափի, նպատակի, հիմունքի):

գ. Ս, դ և ն հոդերը բնութագրվում են որոշյալության կամ առկայացման, դիմորոշության, սրացականության և ցուցականության հարկանիշներով ու համապարասխանության գործառնություններով:

Է. Ընթերցարանը՝ 54 էջ ծավալով, ընդգրկում է բնագրային հարվածներ Առաքել Դավրիժեցու (ԺԷ. դար), Արիստակես Լասարիվերցու (ԺԱ. դար), Ե. դարի հեղինակներ Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Եզնիկ Կողբացու երկերից և Աստվածաշնչից:

ը. Վերջին չորս էջերում տրված են 21 պակասավոր բայերի խոնարհման հարացույցների 4 աղյուսակներ:

թ. Գրախոսվող գրքի ամենաձավալուն և ամենաընդգծված մասերն ու բաժինները բնագրային հարվածների գերեղումներն են և տողադասներում դրանց վերաբերյալ կարարված ծանոթագրությունները. այս առումով հեղինակի գործադրած ահեղի ջանքերն ու տրամաբան, բնագրային փաստերի ընտրությունն ու բացատրությունը, առաջադրանքների կապակցությամբ տրված մեկնաբանությունները խիստ արժանի են դրվատանքի:

Նաճելի կլիներ վերոհիշյալ դրական տպավորություններով ավարտել խոսքս, քանի որ այն վերաբերում է շատ հարգելի գործընկեր և բարեկամ, պրոֆ. Գուրգեն Խաչատրյանի գրքի գնահատությանը: Սակայն 50 և ավելի տարիների մասնագիտական գործունեության արդյունքից առկայծող խղճի թելադրանքով ասվածը, կարծում եմ, վերավորանք չպիտի համարվի, քան օգտակար և օժանդակող գործելակերպ:

Արդ՝ մի քանի դիտարկումներ որոշ նորամտությունների, նկատված թերությունների և անճշտությունների մասին:

Առաջին «նորամտությունը» վերաբերում է նախդիրների և նախադրությունների խոսքիմասային վերանվանմանը. «Նախդիր և նախադրություն եզրաբառերի փոխարեն գործածվել է **կապ**, իսկ **նախդրավոր կապակցության փոխարեն՝ կապական կապակցություն**» (էջ 6): Այս նորամտությունը պարզաբանվում է այս կերպ. «...գրաբարում առանձնանում են նախդիրներին և նախադրություններին վերագրվող հարկանիշներով բնութագրվող մի շարք այլ բառեր, որոնց, սակայն, ոչ նախդիրների շարքում կարելի է տեղ տալ և ոչ էլ նախադրությունների, քանի որ դրանք հանդես են գալիս կապվող բառերից հետո. երադրություններ են: Այդ է պարզառը, որ... նպատակահարմար է գործածել **կապ** եզրաբառը» (էջ 314):

Ասենք թե այդպիսի մի քանի հերադրություններ կան, որոնք նշվում են որպես բացառություններ (բնորոշ է **աղագաւ-ը՝ Է՞ր աղագաւ**), սակայն դա հիմք չի տալիս դարերի ընթացքում ճանաչված, գրավոր աղբյուրներում գործածված

եզրաբառերը կամային անպարասխանաբար կերպով վերացնել ասպարեզից: Սա այլ բան չէ, քան լեզվի մեջ եղած պարմական իրողության՝ արմարավորված սովորության անրեսում եւ բնաջնջում, որն անընդունելի է:

Նկարելի է նաեւ, որ հեղինակն ինքը գոհ չէ իր նորամուծությունից եւ չի կարողանում ազգարվել անցյալում սրացած գիտելիքից ու նրա գործածությունից, որի պարճառով «խեղճ» **գ**-ն դառնում է եւ կապ (էջ 21, 83, 89, 98, 410), եւ նախդիր (էջ 103, 104՝ երկու անգամ, 136), եւ որոշիչ հոդ (էջ 22, 70, 104), **ի/յ**-ն՝ եւ կապ (էջ 21, 27, 347, 411, 413), եւ նախդիր (էջ 26, 27, 43, 44, 76, 108, 350), **ց**-ն՝ կապ (էջ 411), **առ**-ը՝ կապ (էջ 413), նախդիր (էջ 136) եւ այլն:

Ի/յ նախդիրն վերաբերող մի այլ նշում կա՝ «**նախդրիվ փրական**» արտահայտություն (էջ 108)՝ «**յաւորն յայնմիկ**» կառույցի համար. երկու բառաձեւերը՝ **յաւորն**, **յայնմիկ** ծանոթագրվում են որպէս նախդրիվ փրականներ, որը ճիշդ չէ: Այսպէս **ի** նախդիրը փրականի հետ արտահայտում է ներգոյականի իմաստ եւ կրկնվում է ցուցական դերանվան հետադաս գործածության պահանջով: **Նախդրիվ փրականը** ձեւավորվում է **ի**, **ց** նախդիրներով եւ հայցական հոլովով, որ ունենում է «փրական հոլովով սպասելի անուղղակի խնդրի արտահայտություն»¹: Գրքում այդպիսի անթիվ օրինակներ կան, որ նշված չեն:

«**Յորոյ անուն եւ զաշխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպէս Յոյնք Արմէն, իսկ Պարսիկք եւ Ասորիկք՝ Արմէնիկք**» (էջ 223) նախադասության «**յորոյ անուն**» կառույցը ճիշդ չի մեկնաբանված. **յորոյ**-ն առանձնացված է որպէս **որ** դերանվան բացառական հոլով՝ **նրանից** (որից) թարգմանությամբ, մինչդեռ **ի** նախդիրն է հայցականի հետ՝ գործիականի իմաստով՝ **որի** (**նրա**) **անունով**:

Երկրորդ «նորամուծությունը» գրաբարի **անցյալ դերբայի** անվանափոխությունն է՝ **վաղակատար-հարակատար** դերբայի: Նայքնի է, որ անցյալ դերբայն ունի աշխարհաբարի **վաղակատար, հարակատար** դերբայների իմաստ, բայց ի՞նչ իմաստ ունի ճանաչված եւ հարյուրավոր գրքերում ու գիտական ուսումնասիրություններում գործածված եզրաբառը փոխել, մանավանդ, որ կան **ներկա վաղակատար-հարակատար** եւ **անցյալ վաղակատար-հարակատար** (էջ 228-231), **ապառնի վաղակատար-հարակատար** (էջ 252-254) վերլուծական ժամանակաձեւեր: Բարեհոգությամբ «**անցյալ**» եզրաբառը գործածված է երեք անգամ՝ **անցյալ դերբայ** (էջ 6), **վաղակատար-հարակատար (անցյալ) դերբայ** (էջ 198, 489): Շար դեպքերում գործածված է «**վաղակատար-հարակատար**» կապակցությունը, որ սկզբնապէս փարակուսելի է թվում, թե ո՞ր վաղակատար-հարակատարն է, թեւեւ դերբայն է ծանոթագրված:

1 Նման. Ա. Արախանյան, Գրաբարի ձեռնարկ, Երեւան, 1976, էջ 256 («**ի քաջութիւն յուսացեալ. հաւարաց ի նա**», էջ 257), («**յՈՐմիզդ փայր, ի գիրս ապաւինին. հայել ի նա ոչ կամին, մարմնեցի ի մահ**», էջ 409):

«Վաղակատար-հարակատար» հորջորջված դերբայի իմաստները ժամանակակից արևելահայերենում արտահայտվում են հարակատար դերբայով, անորոշի գործիական հոլովով և բայի դիմավոր ձևերով, ընդ որում՝ բազմաթիվ տեղերում այդպիսի համապատասխանություններով ծանոթագրումներ կան. դա հակիրճ է և ընդունելի:

Սակայն կից «նորություն» էլ կա. ծավալուն կաղապարներ են մշակված, որոնց վերջում միայն նշվում են համապատասխան իմաստները: Այդ կաղապարներն են՝

ա. «Վաղակատար-հարակատար դերբայը թարգմանել որպես **անորոշ դերբայի գործիականով լրացում**», որը գործածված է 231 անգամ (էջ 41, 42, 46, 47, 56, 57, 58, 62, 63, 64, 68, 79, 89, 98, 99, 105, 106, 115, 126, 134, 139, 140, 142, 152, 154, 159, 161, 173, 174, 176, 179, 180, 186, 187, 195, 201, 202, 203, 206, 207, 209, 214, 216, 222, 223, 226, 227, 239, 240, 241, 250, 281, 282, 296, 303, 306, 307, 308, 309, 311, 317, 318, 319, 320, 321, 329, 330, 338, 348, 349, 354, 355, 356, 362, 363, 371, 372, 379, 380, 383, 392, 393, 394, 395, 399, 400, 404, 406, 407, 414, 415, 418, 419, 420, 421, 422, 429, 430, 431, 432, 433, 434, 436, 438, 439, 440, 441, 448, 451, 452, 453, 454, 457, 462, 463, 465, 466, 469, 470, 471, 474): 439-րդ էջում 9 կիրառություն կա:

բ. «Վաղակատար-հարակատար դերբայը թարգմանել որպես **հարակատար դերբայ**», որը գործածվում է 70 անգամ (էջ 47, 52, 53, 63, 78, 79, 88, 98, 99, 102, 115, 125, 126, 139, 152, 153, 142, 149, 151, 162, 166, 174, 176, 179, 187, 193, 202, 209, 222, 223, 226, 230, 245, 253, 297, 309, 313, 318, 319, 320, 363, 376, 399, 410, 420, 429, 442, 451, 452, 453, 472, 474, 475):

գ. «Վաղակատար-հարակատար դերբայը թարգմանել **դիմավոր ձևով**», գործածված է 40 անգամ (էջ 41, 56, 57, 58, 89, 91, 119, 125, 151, 166, 173, 186, 195, 201, 203, 230, 317, 320, 322, 365, 368, 370, 386, 399, 402, 417, 429, 432, 435, 436, 440, 441, 446, 450, 453, 456):

Ընդամենը՝ 341 կաղապար:

Պակաս «նորանորություններ» չեն ապառնի դերբայի և բուն (ներկա) հրամայականի, ինչպես նաև ստորադասական վերլուծական ապառնու վերափոխումները՝ **ապակատար (ապառնի) դերբայ. ապառնի հրամայական** (նաև հորդորական հրամայական, որը նույնպես ապառնի է). **ապառնի վաղակատար-հարակատար և ապառնի ապակատար** (վերջինս որքան փարփում է):

Գրաբարում բուն (ներկա) և հորդորական (ապառնի) հրամայականները փարբերակված են իմաստով և քերականորեն, ուստի պետք չէ նմանեցնել արդի հայերենի հրամայականին (որը նույնպես կամային փոփոխության արդյունք է):

Մի օրինակ. «**Ե՛րթ** ի գեղն բո, և **լիջի՛ր** դու անդ երեց գեղջն՝ ուստի ես» (Բուգ.): Պարզ երևում է, որ **Ե՛րթ** (գնա՛) ներկա է, **լիջի՛ր** (լինեն՛, պիտի լինեն, եղի՛ր)՝ ապառնի: Ուրեմն՝ թող մնան իրենց տեղերում: Իսկ եթե բուն հրամայա-

կանը ապառնի է, հորդորականը եւս ապառնի է, հերեւապես պիտի ընդունել մի ապառնի ժամանակաձեւ, որը, ինչպես նկատելի է, կոպիտ սխալ է:

Անէրեւակայեցի «նորամուծություններ» են անկանոն եւ պակասավոր բայերին վերաբերող փոփոխությունները: «Գրաբարի անկանոն բայերի թիվը հասնում է շուրջ հարյուրի (էջ 283). այսպիսի ուռճացված փվյալը զարմանք է առաջացնում, որովհետեւ բայերի բուն անկանոնությունը որոշվում է կապարայալի հիմքից՝ արմարի կամ արմարահնչյունների փոփոխումից: Նարք է ծագում՝ այդ հարյուր բայերի անկանոնությունները այդ սկզբունքով են որոշվում: Կարծում ենք՝ դա արշավանք է այնոց շարադրանքներում նշվող բացառությունների, աննշան շեղումների ու նման երևույթների դեմ եւ ուսուցողական նպատակով արդյունավետ բան չէ:

Պակասավոր բայերը բաժանվում են երկու խմբի՝

Առաջին խմբում են մեզ հայերնի **բամ, գոգցես, գոմ, եմ, իք** (լինել, գոյություն ունենալ), **կայ, պարտիմ** բայերը, ինչպես նաեւ **արբի, ըմպեմ, գամ, եկի, լինիմ, եղանիմ, երթամ, չոգայ, ունիմ, կալայ, ուրեմ, կերայ** (էջ 294) հայերնի անկանոն բայերը, որոնք ըստ խոնարհման ներկայի եւ կապարայալի հիմքերի՝ առանձնացված՝ «պակասավոր» են համարվում: Կարդանք շարադրանքը. «Միայն առաջին հիմքն ու նրանից կազմվող բայաձեւեր պահպանած **գամ, երթամ, ըմպեմ, ունիմ, ուրեմ** եւ միայն երկրորդ հիմքն ու նրանից կազմվող բայաձեւեր պահպանած **արբի, եկի, կալայ, չոգայ** համանիշ պակասավոր բայերը լրացնում են մեկը մյուսի խոնարհման հարացույցի պակասն ամբողջությամբ հետեւյալ գույգերով՝ **գամ-եկի, երթամ-չոգայ, ըմպեմ-արբի, ունիմ-կալայ, ուրեմ-կերայ**» (անդ): Ավանա հիշում եմ Պարույր Սեւակի խոսքը. «Նայոց լեզուն որբի գլուխ չէ, որի վրա դալլաբություն սովորեն»: Արժե՛ մարմինը՝ իրանը հափել-բաժանել երկու մասի, ապա միացնել իրար: Ո՛չ: Իսկ ինչո՞ւ մյուս անկանոն բայերի «համանիշ պակասավոր բայերը» չեն նշվում:

Երկրորդ խմբում են՝ անձրեւէ, լուսանայ, մարթի, պիտի (կարելի լինի, հնարավոր լինի) եւ այլն, այլեւ մի շարք այլ բայերի միադիմի կիրառություններ՝ **դիպեսցի, դիւրանայ, եղել, է, թուի, լինի, հանդիպի, հասանէ, հնարի, ձախողեցաւ, նսեմանայ, պիտի** եւ այլն (անդ): Պարզ է. միադիմի բայերը եւս պակասավոր են:

«Նորամուծություն», որ վերաբերում է նախադասության սկզբում գործածվող **որ** հարաբերական դերանվանը, որի համար կազմված է հետեւյալ ծավալուն կաղապարը. *«Նախադասության սկզբում անկախ կամ կապվող բառի դեր կատարող **որ** հարաբերական դերանունը պետք է թարգմանել նա անձնական դերանվան **սա, դա, նա, այս, այդ, այն** ցուցական դերանուններից որեւէ մեկի անհրաժեշտ հոլովով կամ կապակցությամբ»*, որը կրկնված է 33 անգամ (էջ 62, 64, 88, 89, 100, 102, 105, 126, 201, 202, 213, 216, 223,

281, 282, 305, 306, 311, 320, 338, 339, 363, 365-366, 404, 419, 432, 439, 465, 468, 468, 471):

Դրանցից երեք նախադասություն սկսվում է **որ** հարաբերականով՝ «Որ իբրև թագաորեաց» (էջ 88). «Որ եւ զմնացորդս... եթող զաւակին իւրում» (էջ 126). «Որ արեցեալ զայր իւր» (էջ 468): Մշակված կաղապարը հարմար է կիրառել այս նախադասությունների վրա եւ **որ**-ը փոխարինել **նա**-ով:

Մյուս օրինակներից յոթում **որ**-ը անկախ է՝ **որում**, **որոյ** (էջ 311, 320, 365-366, 89, 201, 432, 439)՝ **հանգման խնդրի, հարկացուցչի, ենթակայի** գործառույթներով: Մյուսներում նախդրավոր եւ նախադրություններով կառույցներ են՝ **ուղիղ խնդրի** (գոր/ս/ - էջ 64, 100, 216, 282), **վերաբերության խնդրի** (գորմէ - էջ 281, 338, 363, **գորոյ** - էջ 419), **պարագաների** (առ **որ** - էջ 62, **րնդ որ** - էջ 102, 305, 320, 468, 471, **վասն որոյ** - էջ 105, 202, 213, 306, 339, **սակս որոյ** - էջ 404) գործառույթներով:

Ուրեմն՝ ավելորդ է նշված կաղապարով երկարաբանել այս կառույցները եւ հոլովաձևերը բնութագրելու համար հաշվի առնել, որ նախադասությունների սկզբում լինելով՝ այդ բառերն ու կառույցները հարաբերվում են նախորդ նախադասությունների հետ՝ որպես գլխավոր միավորների, հետևապես դրանք պետք է ծանոթագրվեն առանց հիշյալ կաղապարի:

Երկու կապակցությունների հարցում թյուրիմացություն կա՝ ա. «**Յորոյ անուն...**» (էջ 223). **յորոյ** թարգմանվել է բացառականով՝ **նրանից**, մինչդեռ յ-ն վերաբերում է **անուն** հայցականին՝ **անունով** (վերետում նշվել է), բ. Բայց այն, որ «...**րնդ նմայն էին**, են ոմանք...» (էջ 465). թարգմանված է **նրա հետ**, որ կապ չունի հարաբերականի հետ:

Համանունություն եւ կրկնասեռություն եզրաբառերը երբեմն րեղին չեն գործածվում: Այսպես՝ մի դեպքում նշվում են **ուղղական/հայցական, սեռական/տրական, սեռական/տրական/գործիական, սեռական/բացառական** նման ձևերը (էջ 43, 44, 22, 49 եւ այլն), այլ դեպքերում այդպիսիք համարվում են համանունություններ: Օրինակ՝ **ու** հոլովման բառերի գործիականը սեռական-տրականի համանունն է (քերականական համանունություն. էջ 25). հոգնակի սեռականը եւ տրականը կազմությամբ միշտ համանուններ են (էջ 29). նշված բայերի (աճեմ, բերեմ, հանեմ, համբերեմ, հեղուսեմ) եւ առաջին, եւ երկրորդ հիմքերը համանուններ են (էջ 283): Բայց կան նաեւ ճիշտ բնութագրումներ՝ ա. անորոշ եւ անցյալ դերբայների սեռական հոլովաձևերը՝ գրել-**գրելոյ**, գրեալ-**գրելոյ** (էջ 199), բ. անցյալ դերբայի հոգնակի սեռական/տրական՝ բժշկեալք-**բժշկելոց** եւ ապառնի դերբայ՝ **բժշկելոց** (եմ. էջ 208): Փաստորեն հեղինակի կարծիքով բոլոր նման ձևերը համանուններ՝ քերականական համանունություններ են, որը ճիշտ է:

Կրկնասեռություն եզրաբառը գործածվում է բայական համակարգի բոլոր առնչություններում՝ չեզոքացնելով **հասարակ** (ընդհանուր) եզրաբառը, հետևապես՝ հասարակ բայերի խոնարհման առանձնահատկությունը: Կրկնասե-

ռության եւ հասարակ լինելու հարկանիշները փարբերակված չեն, պարզապես նույնացված են. խնդրեմ՝ «**Կրկնասեռ (հասարակ) բայեր եւ բայաձեւեր**» (Էջ 273) կամ «**Բայի սեռը**» (կրկնասեռ/հասարակ բայեր եւ բայաձեւեր. Էջ 490):

Լուրջ բացեր եւ թերություններ կան ծանոթագրությունների հարցում: Լավ է, որ գիրքը հեղեղված է բնագրային նյութերով, սակայն դրանք ծանոթագրելիս կան մանրագին բնութագրումներ չեն կատարվում, եւ շար կառույցներ դուրս են մնում բացառություններից, կան ուղղակի բացառությունների փոխարեն անուղղակի մեկնաբանություններ են տրվում, որոնք պակաս փափվորություն են թողնում քերականական եւ բառական, կապակցական իմաստները, հենց բնագրի իմաստը հասկանալու խնդրում: Անթիվ փաստեր կան ասվածը հաստատելու համար, սակայն բավարարվենք մի քանիսի վկայությամբ:

Էջ 273՝ «**Գուցէ թողեալ հօր մերոյ գէշն**» կառույցը թարգմանել երկկազմ նախադասությամբ՝ «Գուցե մեր հայրը թողնի Էշերը»: Էջ 368՝ «**Շինեալ էր մեծին Գրիգորի**» կառույցը թարգմանել երկկազմ նախադասությամբ՝ «Շինել էր մեծն Գրիգորը»: Այդպես էլ՝ «**Չիցե՛ լուեալ քո**» (Էջ 346), «**Ջոր մարդոյ չիցէ ածեալ գմբաւ**» (Էջ 418), «**Իմ կալեալ կապեալ ընկեցեալ իցէ զՄանուէլն**» (Էջ 454), «**Թէ չէր անցուցեալ Ադամայ**» (Էջ 477), «**Դորա անթիւ ճակար մընեալ էր**» (Էջ 447), «**Ջոր փարեալ էր Շապիոյ արքային**» (Էջ 447), «**Թագաւորին տուեալ էր պատերազմ**» (Էջ 447) եւ այլ անթիվ կառույցներ՝ նույն մեկնաբանությամբ: Ուսանողը, կարդալով թարգմանությունը, գաղափար չի կազմի կառույցի մասին, որ անցյալ դերբայի եւ նրանով ձևավորված ստորոգյալի պահանջով գործածվում է սեռական հոլովով ենթակա: Ուրեմն ծանոթագրել՝ անցյալ դերբայը պահանջում է սեռականով ենթակա:

Էջ 250՝ «**...պարտ է նմա թագաւորել**» կառույցը թարգմանել «**...պէտք է նրան թագավորել**», կամ բարդ նախադասությամբ՝ «**...պէտք է/հարկավոր է, որ նա թագավորի**»: Նախ՝ «**...պէտք է նրան թագավորել**» կառույցը անիմաստ է. թարգմանությունն իմանալով՝ ուսանողը գաղափար չի կազմում կառույցի մասին, որ տրականով ենթակա է՝ «**միադիմի բայ+անորոշ դերբայ**» ստորոգյալի մոտ: Ուրեմն անհրաժեշտ է ծանոթագրել: Այսպիսի օրինակները շար են:

Էջ 340՝ «**Ջիւհրդ էր, զի նմա միայն պարտ էր լսել եւ խօսել զբանս անճառս**» նախադասության «**անճառ**» բառն է ծանոթագրված՝ «**անպատմելի**», մինչդեռ անտեսվել է կարեւորը՝ «**նմա պարտ էր լսել եւ խօսել**» կառույցը (տրական ենթ., **միադիմի բայ+անորոշ**):

Էջ 402՝ «**Եւ... ասեն պայթել որձաքար վիմացն**». «**...պայթել որձաքար վիմացն**» անդեմ կառույցը թարգմանել դիմավոր ձեւով՝ «**ապառաժ քարերը պայթում էին**»: Թարգմանությունն արված է, բայց կառույցը ինչպիսի՞ն է. «**տրականն է անորոշի հետ**» (տրականով ենթական անորոշ դերբայի հետ. տե՛ս նաեւ Էջ 215-216՝ «**գնելոյ ունել**»):

Էջ 400՝ «Սովորությունն ունել սպասատրացն» (նույնալիսի կառույց է, բայց էլի բացարկված չէ):

Այլ բնության թերություններն էլ սխալներ. Լրջագույն թերություն է, որ այդ-պիսի գիրքը բառարան չունի. այդ պակասը լրացնելու համար փողափակերում մանրամասն բացարկություններ են փրկված, սակայն դա բավարար միջոց չէ, քանի որ ընթերցողը չի կարող հիշել, թե շուրջ 500 էջանոց գրքի որ էջում բառերի ինչ բացարկություններ են արված:

Էջ 53-ում արտառոց բացարկություն կա. «Յնք նորա թագաւորեաց Սամեգար, որ սպան վեցհարիւր այր մաճիւ արօրոյ» (նախադասության «մաճիւ» բառածելը ծանոթագրված է՝ «մաճ» (=եզներն ուղղորդողի փայտ, խոփ) բառի գործիականն է՝ «մաճով»: Չիմացություն է (տրգիություն չեն ասում). այո, **մաճը** փայտ է, բայց ոչ եզներն ուղղորդողի, այսինքն՝ հուրաղի ձեռքի փայտը՝ **ճիպուրը**, որով թշում է եզները, առավել վատ է եւ ծիծաղելի, որ **մաճը խոփ** է. սրացվում է, որ **մաճը** եւ փայտ է, եւ երկաթ (խոփը միայն երկաթից է): Պիտի կարծել, որ բառարան ունենալու դեպքում գրքի հինգ պատասխանատուներից (երկու պրոֆեսոր, երեք դոցենտ) մեկը կկարդար Էդվարդ Աղայանի բացարկական բառարանը՝ «ՄԱՃ, ի. գ. - Արորի կոթը, որից բռնելով մաճկալը վար է անում»², եւ կգերեղեր գրքում, իսկ ուսանողն էլ կիմանար, որ **մաճը խոփ** չէ:

Էջ 88՝ ճիշտ չէ «պատասխանի ընկալալ» կապակցության բացարկությունը. եթե **պատասխանի**-ն ուղղական հոլովածն է եւ ուղղական հոլովով, ապա ստորոգյալը չէր լինի **սրացավ**, այլ **սրացվեց** (սրացավ **պատասխան**՝ հայցական. արացվեց **պատասխան**՝ ուղղական):

Էջ 214՝ չի կարելի ասել՝ «Այր անկանոն գոյական» (հասկանանք՝ **այր** անկանոն հոլովման գոյական է):

Էջ 151՝ ճիշտ չէ «...որոց ի խոովելն՝ այր մի սպանեալ էր» (նախադասության թարգմանությունը (օգտագործված է Ասրվածաշնչի թարգմանությունը). ոչ թե «...որոնք մի մարդ էին սպանել», այլ՝ «Երբ նրանք (խռովարարները) խառնվեցին-ալեկոծվեցին (խռովություն բարձրացրին), մի մարդ սպանվեց (մի մարդ էր սպանվել): **Որոց**-ը սեռականով կողմնակի ենթակա է, **այր**-ը՝ բուն ենթակա՝ ուղղական հոլովով, որը որոշվում է եւ բուրի գործածությամբ՝ դարձվածի փրոնոմով, եւ **զ** նախդիրը չկրելու հանգամանքով:

Էջ 394՝ «Բազմական արկանել» չի նշանակում «սեղան գցել», այլ՝ «բարձ գցել, բարձ դնել»³, մանավանդ նշվում է «ի նորին փախարի արկանել» (=նույնի (նրա) թախարի վրա գցել). թախարի վրա սեղան չեն գցի:

Էջ 385՝ երկրորդական նախադասությունը միջոցի խնդիր չէ: Միջոցի խնդիր է **այն** դերանվան **այնու** հոլովածնը, որը «զի յերկրէ կերակրին եւ ի նմա բնակեն...» երկրորդական նախադասությունների բացահայտյալն է:

² Տե՛ս Էդուարդ Աղայան, Արդի հայերենի բացարկական բառարան, Դ.-Ֆ, Երևան, 1976, էջ 960:

³ Նման **Ա. Արախանյան**, նշվ.աշխ., էջ 407:

Էջ 332՝ ճիշտ չէ միակազմ նախադասություններ համարել «Է ինչ, **գոր ո՛չ քեզ պարտ է ասել եւ ո՛չ մեզ հնար է հնազանդել եւ յանձն առնուլ**» կառույցները, որովհետեւ նրանցում առկա են **քեզ, մեզ** փրական հոլովով ենթակա-ները եւ դրանց **ոչ է պարտ ասել եւ ոչ է հնար հնազանդել, յանձն առնուլ** բայական բաղադրյալ ստորոգյալները:

Էջ 389՝ ճիշտ չէ երկրորդական նախադասությունները վերաբերության անուղղակի խնդիր համարել առանց **յաղագս** նախադրության. րնդգծված նախադասությունները նախադրության խնդիր են, վերաբերության կլինեն նախադրության հետ:

Էջ 434՝ «**Տնազանդեալ անսայք**»-ը սխալ է թարգմանված՝ **հնազանդ-վենք/անսանք**. բայը **երկրորդ դեմքով է գործածված**:

Էջ 15-18՝ րնթերցանության կանոնները ներկայացնելիս ճիշտ կլինի գործածել արևելահայերենի գրերը, քան բարբառային փարադարձումները: Օրինակ՝ դրօշնալ>դրոշյալ, ոչ թե դրօշյալ. յիշելոյ>հիշելո, ոչ թե հիշելո. Բագրեւանդ>Բագրեւանդ, ոչ թե Բագրէվանդ. Ղեւոնդ, ոչ թե Ղէվօնդ. եւ զգօրսն>եւ [եվ] ըզգօրսրն, ոչ թե յէվ ըզգօրսրն. Նինուէ >Նինվէ, ոչ թե Նինվէ եւ այլն:

Կամ ինչպե՛ս հասկանալ՝ աղաւնեալ [աղավնյօք], կարծեալք [կարծյօք], քաղղեայք [քաղղէայք]: **Աղաւնեալք**-ը պետք է րնթերցել **աղաւնյավք**, իսկ եթե **աղաւնեօք** է, կարդալ **աղաւնյօք**: Այդպէս էլ՝ **կարծեալք>կարծյավք, կարծեօք>կարծյօք**: Իսկ **քաղղեայք**-ը՝ **քաղղյայք**, ոչ թե **քաղղէայք**:

Ընդունելի չեն՝ կողմանն աջոյ>**աջօ**, Թաթլաւ>**Թաթլլավ** (հմմտ. թողուլ-թողլով), եղբայրն>**յնդպայրրն**, պղծութիւն>**պխծություն**, դայեակ>**դայակ** (պետք է լինի դայակ), պաշտաւն>**պաշտօն**, Ասրայ>**Օսրա** (կարո՞ղ են **քաղղեայ**-ն րնթերցել քօղյա) եւ այլն:

Նոյովման եւ խոնարհման հարացույցները, աղյուսակները համապարած կարգով վանդակներում ներկայացնելը երբեմն ծանր փպավորություն է թողնում, փեսադաշտը ծանրանում է, րնկալումը՝ դժվարանում:

Կան մեկնաբանություններ, որոնք ասրենախոսության բաղադրիչներ են հիշեցնում (էջ 333-338):

Բնքնաշեն կամ քիչ գործածվող բառեր՝ ինիական (ի-ինի-ինիական. էջ 183), պարականոն (էջ 90), անդիմաստահմանափակ (էջ 211, 335), ենթակառություն (էջ 333), կրկնաբաղադրյալ (էջ 351), հավելադրություն (էջ 167), փարբայթ (էջ 7):

Անընդունելի գուգամեություններ՝ հնչույթային//հնչութային (էջ 7), **սեռական-փրական** (էջ 25, 29, 49, 55, 59, 65)//**սեռական եւ փրական** կամ **սեռական, փրական** (էջ 22, 29, 43, 44, 49, 55, 65):

Քառասուն եւ ասվելի վրիպակներ.

Էջք՝ 5. վերաբերո՞ւ, 6. Մոսես, 6. Լասփիվերվերպցու, 42. մորուս, 83. (=կոճակ)...շիզդ, 89. առ՞մեզ, 112. նժուգի, 113. զգա, 129. Արշակա . թվականների

>գոյականների, 151. ... որպես նախադասությամբ, 151. 2626, 159. կեղանի, 173. յարուց~~ա~~նելոցն, 183. բա~~ռ~~ածայններով, 246. հոուացն, 256. աշակե~~ն~~ւերելոց, 258. խնարհվող, 262. հանձակվելու, 265. ոչ ան~~ա~~կայց, 275. ձեռ¹⁰, 276. հիմից, 276. առնվել¹⁸, 280. Ան~~մ~~դեմ, 284. Ներգործած եւ, 284. Կրավորած եւ, 284. ածցեսեր, 288. պահպանվում է է, 341. ճա ապարհ, 344. երինից, 344. զարդ, 347. Հայոցեւ, 348. ի նքն, 349. լամ, 372. Զանապա~~ռ~~ա, 373. ~~ռ~~ոչ. փարբ եր, 387. մեծալ, 391. յասյակոյս, 402. վիմաց[ն], 26, 30, 274. կերպադրություն:

Մի՞թե խմբագիրները գիրքը չեն թերթել:

Սույն գրքի սրեղծման ահեղի աշխատանքում կան դրական կողմեր, սակայն, րեղ են գրել նաեւ թերություններ ու բացեր: Վերջիններիս շարքում բացահայտ մերժելի են՝

1. Գրաբարի **նախդիրները** եւ **նախադրությունները** փոխարինելը **կապ**, իսկ **անցյալ դերբայը՝ վաղակապար-հարակապար դերբայ** եզրաբառերով ու հասկացություններով:

2. Անկանոն հոլովման, անկանոն խոնարհման բառերի եւ պակասավոր բայերի թվակազմերի ուռճացումն ու բնութագրումները:

3. Գրքի 5632 ծանոթագրություններում ոչ րեղին ու պակաս արդյունավետ բացատրությունները եւ կաղապարումները: Նշված «նորամուծություններն» ու կապարումները ուսուցողական րեսակերից ոչ մի առավելություն չունեն եւ ըստ էության՝ նսեմացնում, անրեսում եւ հեղինակագրկում են մինչ այժմ եղած բոլոր դասագրքերը, ձեռնարկները, ուսումնասիրությունները: Մեղմ ասած՝ գրաբարի՝ անցյալի մշակութային ժառանգության ժխտման մասնակի փորձ է արվում:

Անհաջող հերետոքներ չաճեցնելու համար գիրքը պետք է վերահրապարակել, շրկումներ կարարել, բառարան կցել, ապա հրամցնել ուսանողներին եւ գրաբար սովորողներին:

ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՉՅԱՆ
բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր